

զիմաստունն եւ զխորհրդականն. որոց ոչ զոյ առաջնորդ՝ թօթափին իբրեւ զտերեւ ծառոց, եւ ոչ գտցի առաջնորդ ազգի անօրինի, որպէս յանձուկն տեղւոյ ըողոքեալ եւ ակն ամէին օգնութիւն ի Տեառնէ Անանիայքն ի մէջ հրոյն, որք զարմացուցեալ զխրատասիրտն եւ զզջացուցեալ զգոռոզն որ զինքն անպատկառարար աստուած տայր քարոզել եւ երկրպագել՝ ասէ. Ո՛չ ես չորս արս արկի, եւ զչորրորդն տեսանեմ նման որդւոյն Աստուծոյ. եկա՛յք արտաքս ծառայքդ Աստուծոյ, զի եւ ես զՏէրն ձեր փառաբանեցից, որ զմեզ եւ զձեզ ստեղծեաց յայտնի հրաշիւք ցուցեալ զինքն աստանօր:

Արդ, ո՛վ տէր վարդապետ, իրաւի զի եւ գրեալքն հաւատարիմք. հաւատարմացս եթէ ոչ էաք հանդիպեալ զպարսպօք փորձութեանց եւ երբեմն անցուցեալ զմարդ ի վերայ գլխոց մերոց՝ ընդ կարծեօք անկանէր յանդիման մեզ գրեալքն առաջնոց: Վասն որոյ եւ ինձ հաւատարմանայ եւս առակք իմաստնոց ամենայն ազգաց. նասրէտտիւնոյն առասպելաց եւս գոգեցից՝ թէեւ անարգացն թարգմանիչք ի բիրտ եւ ի սոպոյ յազգս Հայոց, եւ ես որդն եմ եւ չեմ մարդ հասարակաց:

Ասացից զի ծիծաղեսցիս ի զթօսանս նորագոյնս, զի երկու թեւօք պերճացեալ թռչին սեւազլուլք յօդս աշխարհայնապէս եւ յաշխարհի զիրսն սիրող եւ զինքն սիրողաց, զոր ի գրումդ յայտ յանդիման հաստատեցեր երիս իրս տեսնելի. նախ՝ նրգներ (?) ըստ օրինի նախնեաց սահմանօք զողջունաշար գրուատս. երկրորդ՝ ըստ բաժանականին զայլոցն ի քեզ, եւ քեւ Աստուած օրհնէ մակտացական պանծացեալք ի նոյն եւ նովաւ վերճեմիլ, ըստ վերլուծականին պատճառելով զպատճառս զամագամից զբաղանաց պատահարաց հարուածոց յօտարածնաց եւ ի սուտ եղբարց որ եւ հազարա-